Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 11-01-2021 թ. որոշմամբ
««ՌԵՍՏԱՐՏ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2020 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՌԵՍՏԱՐՏ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՇՏՈՑԻ 45Ա
1.3 Պետական գրանցման համարը		222.160.1043448
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2018-10-29
1.5 ՀՎՀՀ-ն		02686098
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)94753111
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		
1.8 Էլեկտրոնային փոստը		aslnarine@gmail.com
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
Արամայիս Պետրոսյան		
Վիգեն Խալատյան		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը		
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ծրագրի անվանումը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Ռեստարտ նախաձեռնության ինստիտուցիոնալ զարգացման ծրագիր	13908223
	Ուսանողները որպես Հայաստանի ժողովրդավարացման ակտիվ մասնակիցնե	2281406
	Ռեակտիվիզմ երիտասարդների ակումբ	1792744

	Բուհերի կառավարման համակարգերի ուսումնասիրության ծրագիր	15978461
	Երիտասարդները հանուն ժողովրդավարության	11044530
	Հնդկական Ջայ Ջազաթ	470259
	Ֆեյք նյուզերը Լուգար հետազոտական կենտրոնի վերաբերյալ	403576
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Ֆիզիկական անձանցից	250000
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Ռեստարտ նախաձեռնության ինստիտուցիոնալ զարգացման ծրագիր	12605378	
Ուսանողները որպես Հայաստանի ժողովրդավարացման ակտիվ մասնակիցներ	1662647	
Ռեակտիվիզմ երիտասարդների ակումբ	837544	
Բուհերի կառավարման համակարգերի ուսումնասիրության ծրագիր	9351086	
Երիտասարդների անհավասարությունը արևելյան Եվրոպայում և Ռուսատանում	2105980	
Հնդկական Ջայ Ջազաթ	470259	
Ֆիզիկական անձանցից	392168	
Ֆեյք նյուզերը Լուգար հետազոտական կենտրոնի վերաբերյալ	403576	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	27828638	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	27828638	

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ ____18____թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

«Ջի Ընդ Քո
Աուդիտ Գրուպ» ՍՊԸ

"G & Co
AUDIT GROUP" LLC

ՀՀ, ք.Երևան 0038, Լենինգրադյան 4ա
4a Leningradyan, Yerevan 0038, RA
Հեռ. +37410 399 855
www.gaudit.am , info@gaudit.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Ռեստարտ» Գիտակրթական Բարեգործական
Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին**

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ռեստարտ» Գիտակրթական Բարեգործական Հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2020թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև՝ այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն փոքր և միջին կազմակերպությունների Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Հիմնադրամի 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններն աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, որն այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 2020թ. հունիսի 30-ին արտահայտել է չձևափոխված կարծիք:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.

- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Հաստատված է
«Զի ընդ Քռ. Աուդիտ Գրուպ» ՍՊԸ

Տնօրեն Լ.Պողոսյան

Աուդիտոր Վ.Խաչիբաբյան

«02» հունիսի 2021թ.
Երևան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

«Ռեստարտ» Գիտակրթական Բարեգործական Հիմնադրամ

2020թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ

ԱԿՏԻՎՆԵՐ	Ծանոթագրություններ	31/12/2020 դրամ 000	31/12/2019 դրամ 000
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	734	338
Ոչ նյութական ակտիվներ	5	736	74
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**1,470**	**412**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		86	-
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր		98	1,020
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	6	18,835	10,962
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**19,019**	**11,982**
Ընդամենը ակտիվներ		**20,489**	**12,394**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	7	1,470	412
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**1,470**	**412**
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	8	1,417	67
Հարկերի և պարտադիր վճարների գծով պարտավորություններ	9	774	714
Եկամուտներին վերաբերվող շնորհներ	7	16,828	11,201
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**19,019**	**11,982**
Ընդամենը պարտավորություններ և զուտ ակտիվներ		**20,489**	**12,394**

10-ից 20-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Տնօրեն
Յուրի Ավագյան

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
«Ռեստարտ» Գիտակրթական Բարեգործական Հիմնադրամ
2020թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Ծանոթագրություններ	2020	2019
		դրամ 000	դրամ 000
Եկամուտներ		-	-
Եկամուտ ճանաչված շնորհներ	10	39,444	19,748
Ընդամենը եկամուտներ		**39,444**	**19,748**
Ծախսեր			
Իրականացված ծրագրերի գծով ծախսեր	11	(39,796)	(18,068)
Վարչական ծախսեր	12	(416)	(168)
Այլ ծախսեր		(53)	-
Ընդամենը ծախսեր		**(40,266)**	**(18,236)**
Ֆինանսական եկամուտներ		25	
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից եկամուտ/ծախս		798	(1,512)
Տարվա արդյունք մինչև հարկումը		(0)	0
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)		-	-
Տարվա արդյունք հարկումից հետո		(0)	0
Այլ համապարփակ ֆինանասական արդյունք			
Զուտ ակտիվներում ճանաչված օգուտներ (վնասներ)		-	-
Տարվա ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք		**(0)**	**0**

10-ից 20-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Տնօրեն
Յուրի Ավագյան

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
«Ռեստարտ» Գիտակրթական Բարեգործական Հիմնադրամ
2020թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	01.01.2020-31.12.2020	01.01.2019-31.12.2019
	դ 000	դ 000
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Որպես նվիրատվություններ և նվիրաբերություններ ստացված դրամական միջոցներ	43,742	30,505
Վճարումներ ստացված ծառայությունների և նյութերի գծով	(17,241)	(6,887)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(18,731)	(10,636)
Վճարումներ պետական մարմիններին	(718)	-
Այլ ելքեր	-	(508)
Գործառնական գործունեությունից ստացված / գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**7,051**	**12,474**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Ստացված տոկոսներ	25	-
Ստացված դրամաշնորհներ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռքբերման համար	2,338	856
Հիմնական միջոցների ձեռք բերում	(2,338)	(856)
Ներդրումային գործունեությունից ստացված / գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**25**	**-**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից		
Ֆինանսական գործունեությունից ստացված / գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**-**	**-**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/նվազում	**7,075**	**12,474**
Արտաժույթի փոխարժեքային տարբերություններ	**798**	**(1,512)**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	**10,962**	**-**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի վերջի դրությամբ	**18,835**	**10,962**

10-ից 20-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Տնօրեն
Յուրի Ավագյան

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

«Ռեստարտ» Գիտակրթական Բարեգործական Հիմնադրամ

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա համար, հազար դրամով

1. Հիմնադրամի գործունեության բնույթը

«Ռեստարտ» Գիտակրթական Բարեգործական Հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) քաղաքացիների կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է: Հիմնադրամը պետական գրանցում է ստացել 2018թ հոկտեմբերի 29-ին, պետական գրանցման համարն է 222.160.1043448, ՀՎՀՀ-ն՝ 02686093:

Հիմնադրամի գտնվելու վայրն է ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի 45ա:

Հիմնադրամի կանոնադրական նպատակներն են՝

- նպաստել երիտասարդության առաջ ծառացած խնդիրների լուծմանը,
- նպաստել երիտասարդների սոցիալական խնդիրների լուծմանը,
- խթանել ՀՀ-ում կրթության որակի բարձրացմանը,
- խթանել ուսանողների հետազոտական և գիտահետազոտական ունակությունների աճին,
- զարգացնել ուսանողների քաղաքացիական գիտակցությունը,
- բուհական միջավայրում խթանել ակադեմիական ազատությունը և ուսանողակենտրոնությունը,
- նպաստել ուսանողների ներգրավվածությանը և ակտիվությանը հասարակական աշխատանքներում:

Հիմնադրամի շահառուներն են երիտասարդները՝ ներառյալ ուսանողները և երիտասարդ գիտնականները:

Հիմնադրամի հիմնադիրներն են Արամայիս Պետրոսյանը և Վիգեն Խալատյանը:

Հիմնադրամի բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը հոգաբարձուների խորհուրդն է, որը բաղկացած է հետևյալ անդամներից.

Միքայել Հովհաննիսյան	խորհրդի նախագահ
Աննա Գևորգյան	անդամ
Սերգեյ Խաչունց	անդամ
Ռուբեն Բանուչյան	անդամ
Արեն Մանուկյան	անդամ
Սոնա Այվազյան	անդամ
Հայկ Զաքարյան	անդամ
Արսեն Խառատյան	անդամ
Գեմաֆին Գասպարյան	անդամ

2. Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանությունը

Հաշվապահական հաշվառումը վարվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան: Ֆինանսական հաշվետվությունները կազմվել են համաձայն փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

Այս ֆինանսական հաշվետվություններն իրենցից ներկայացնում են Հիմնադրամի տարեկան ֆինանսական հաշվետվությունների առաջին փաթեթը, որտեղ կիրառվել է ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ն: ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ին անցումը Հիմնադրամի համադրելի ֆինանսական տեղեկատվության ազդեցություն չի թողել:

Հիմնադրամը ՖՀՄՍ-ներից անցում է կատարել ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ին հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 16-ի N 1209-Ն որոշմամբ հաստատված Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի և 2019 թվականի դեկտեմբերի 4-ին ընդունված 2020թ հունվարի 1-ին ուժի մեջ մտած «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի դրույթները:

2.2. Չափման հիմքը

Ակտիվներն ու պարտավորությունները ներկայացված են սկզբնական (պատմական) կամ ամորտիզացվող արժեքով:

2.3. Չափման և ներկայացման արժույթը

Հիմնադրամի համար որպես չափման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթ ընդունվել է ազգային արժույթը՝ ՀՀ դրամ (դրամ): Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է հազար դրամներով՝ առանց ստորակետից հետո տասնորդական նիշի:

2.4. Անընդհատությունը

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները կազմվել են ելնելով անընդհատության հիմունքից, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում:

2.5. Համադրելիությունը և ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացումը

Ընթացիկ ֆինանսական տարվա տվյալները համեմատելի են նախորդ ժամանակաշրջանի համար ներկայացված տվյալների հետ:

Հիմնադրամը ուղղում է նախորդող ժամանակաշրջանի էական սխալները հետընթաց (բացառությամբ, երբ անիրագործելի է կոնկրետ ժամանակաշրջանի վրա սխալի հետևանքների

կամ դրա կուտակային հետևանքների որոշումը) դրանց հայտնաբերումից հետո հրապարակման համար հաստատված առաջին ֆինանսական հաշվետվությունների փաթեթում՝

ա) վերահաշվարկելով ներկայացված այն նախորդող ժամանակաշրջանի (ժամանակաշրջանների) համեմատելի գումարները, որոնցում տեղի է ունեցել սխալը, կամ

բ) եթե սխալը տեղի է ունեցել նախքան մինչև ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանը, ապա ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի սկզբնական մնացորդները վերահաշվարկելով ներկայացված նախորդող ամենավաղ

3. Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականության և գնահատումների համառոտ ամփոփում

3.1. Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են ստորև նշված կատեգորիաներում՝ ըստ ֆինանսական ակտիվների ձեռքբերման նպատակի: Հիմնադրամը չունի որպես «մինչև մարման ժամկետը պահվող» դասակարգված ֆինանսական ակտիվներ: Ստորև ներկայացված է Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հաշվեկշռի ամսաթվին առկա յուրաքանչյուր կատեգորիայի համար, բացառությամբ հեջավորման պահանջներին համապատասխանող ֆինանսական ակտիվների:

Դեբիտորական պարտքեր

Դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք գնանշված չեն ակտիվ շուկայում: Այդպիսի ֆինանսական ակտիվները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են ձեռքբերմանը կամ թողարկմանը, իսկ հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսի մեթոդը՝ հանած արժեզրկման պահուստը:

Արժեզրկման պահուստը ճանաչվում է, երբ առկա է անկողմնակալ վկայություն (օրինակ՝ կողմերն ունեն զգալի ֆինանսական դժվարություններ, չեն կատարում ստանձնած պարտավորությունները կամ ուշացնում են վճարումները) առ այն, որ դեբիտորական պարտքը սահմանված ժամկետներում հնարավոր չի լինի ամբողջությամբ հավաքագրել: Նման պահուստի գումարն ակտիվի զուտ հաշվեկշռային արժեքի և արժեզրկված պարտքերի գծով ապագա դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Դրամական միջոցները և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցներ դրամարկղում և բանկային հաշիվներում:

3.2. Ֆինանսական պարտավորություններ

Հիմնադրամը ֆինանսական պարտավորությունը ճանաչում է, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Հիմնադրամը ֆինանսական պարտավորությունը (կամ ֆինանսական պարտավորության մի

մասը) ապաճանաչում է, երբ այն մարվում է, այսինքն՝ երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված կամ վճարվելիք հատուցման միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Առևտրական կրեդիտորական պարտքեր

Սկզբնական ճանաչման պահին կրեդիտորական պարտքը չափվում է սկզբնական արժեքով (սկզբնական հաշվում նշված գումարով), բացառությամբ այն դեպքերի, երբ զեղչման ազդեցությունը զգալի է: Այս դեպքում կրեդիտորական պարտքը չափվում է զեղչված արժեքով:

3.3. Վարձակալություն

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն, երբ վարձակալության պայմաններով սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտներն փոխանցվում են վարձակալին: Մյուս բոլոր վարձակալությունները դասակարգվում են որպես գործառնական վարձակալություն:

Գործառնական վարձակալության տրված (ստացված) ակտիվները ճանաչվում են վարձատուի հաշվեկշռում:

Որպես վարձատու, գործառնական վարձակալությունից եկամուտը գծային հիմունքով ճանաչվում է համապատասխան վարձակալության ժամկետում:

Որպես վարձակալ, գործառնական վարձակալության գծով վարձավճարները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են որպես ծախս կամ ծախսում գծային հիմունքով, եթե մեկ այլ սիստեմատիկ հիմունք ավելի լավ չի ներկայացնում ակտիվի օգտագործումից օգուտների ստացման ժամանակային գրաֆիկը: Գործառնական վարձակալության ներքո առաջացող պայմանական վարձավճարները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ դրանք առաջանում են:

3.4. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները գնահատվել են սկզբնական (ձեռք բերման, կառուցման) արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է հիմնական միջոցների ձեռքբերմանն ուղղակիորեն վերագրելի ծախսումները:

Հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են այն առանձին ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները, որին վերաբերում են: Հիմնական միջոցների բաղկացուցչի փոխարինման ծախսերը ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ Հիմնադրամը կկրի այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները և վերջինիս արժեքը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել: Փոխարինվող բաղկացուցչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված շահույթը և վնասը որոշվում են համեմատելով օտարումից ստացվելիք մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում են զուտ հիմունքով:

Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա մնացորդային արժեքը: Առանձին ակտիվների էական բաղկացուցիչները գնահատվում են, և եթե բաղկացուցչի օգտակար ծառայության ժամկետը տարբերվում է ակտիվի մնացած մասերի օգտակար ծառայության ժամկետից, ապա այդ բաղկացուցչի մաշվածությունը հաշվարկվում է առանձին: Մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արժենվազեցման գծային մեթոդով՝ առանձին ակտիվների օգտակար ծառայության ժամկետների ընթացքում: Մաշվածությունը սկսվում է հաշվարկվել այն պահից, երբ ակտիվը մատչելի է դառնում օգտագործման համար:

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

Հիմնական միջոցների համար սահմանվել են հետևյալ օգտակար ծառայության ժամկետները՝

Հիմնական միջոցի տեսակը	Օգտակար ծառայության ժամկետ	
	տարի	դրույք
Համակարգչային տեխնիկա	1	100%
Մեքենաներ և սարքավորումներ	8	12.5%

3.5. Պաշարներ

Պաշարները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով, իսկ հետագայում չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, փոխարկման և պաշարները ներկայիս գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները:

Համանման բնույթ և կիրառություն ունեցող բոլոր պաշարների ինքնարժեքի որոշման համար կիրառվում է ինքնարժեքի առաջինը մուտք՝ առաջինը ելք (ԾԻԾՕ) բանաձևը:

3.6. Եկամուտներ և ծախսեր, շնորհներ

Եկամուտները և ծախսերը հաշվառվել են հաշվեգրման հիմունքով, այսինքն՝ նրանք համարվել են եկամուտ կամ ծախս դրանց տեղի ունենալու պահին անկախ դրանց հետ կապված դրամական միջոցների վճարման կամ ստացման ժամկետից:

Ստացված շնորհները, նախքան եկամտի (հասույթի) ճանաչման չափանիշները բավարարելը, ճանաչվում են որպես պարտավորություն:

Շնորհը, որը Հիմնադրամի համար չի սահմանում որոշակի ապագա պայմանների կատարում, ճանաչվում է եկամտում, երբ շնորհի գծով մուտքերը ստացման ենթակա են, իսկ այն շնորհը, որը սահմանում է որոշակի ապագա պայմանների կատարում, ճանաչվում է եկամտում միայն, երբ պայմանների կատարումը բավարարվում է.

Ակտիվներին վերաբերող շնորհը նվազեցվում են ակտիվի հաշվեկշռային արժեքը հաշվարկելիս: Շնորհը արտացոլվում է շահույթում կամ վնասում մաշվող (ամորտիզացվող) ակտիվի օգտակար ծառայության ընթացքում՝ նվազեցված մաշվածության ծախսի ձևով:

Շնորհը, որը ստացման ենթակա է դառնում ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որի նպատակն է Հիմնադրամին տրամադրել անհետաձգելի ֆինանսական օգնություն՝ առանց դրա հետ կապված հետագա ծախսումների, ճանաչվում են շահույթում կամ վնասում այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ այն դառնում է ստացման ենթակա:

3.7. Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Հիմնադրամին մատուցել է ծառայություն, Հիմնադրամը աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որոնք ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչում է

ա) որպես պարտավորություն արդեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Ընկերությունը ճանաչում է այդ տարբերությունը որպես ակտիվ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի, և

բ) որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ով պահանջվում կամ թույլատրվում է հատուցումների գումարը ներառել մեկ այլ ակտիվի արժեքի մեջ (օրինակ, պաշարների, հիմնական միջոցների դեպքում):

Հիմնադրամը փոխհատուցելի բացակայությունների ձևով աշխատակիցների հատուցումների ակնկալվող ծախսումները ճանաչում է

ա) կուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ տարեկան արձակուրդը) այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքները ապագա փոխհատուցելի բացակայությունների նկատմամբ, և

բ) չկուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ՝ ժամանակավոր անաշխատունակությունը) այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Հիմնադրամը կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները չափում է որպես լրացուցիչ գումար, որը Հիմնադրամը ակնկալում է վճարել որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք:

3.8. Արտարժույթով գործարքներ և մնացորդներ

Արտարժույթով գործարքները սկզբնական ճանաչման պահին գրանցվել են հաշվետվական արժույթով (դրամ) գործարքի օրվա դրությամբ փոխանակման փոխարժեքով, այսինքն՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով:

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին՝

-արտարժույթով արտահայտված դրամային հոդվածները ներկայացվել (վերահաշվարկվել) են փակման փոխարժեքով,

-արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները ներկայացվել են գործարքի օրվա փոխանակման փոխարժեքով:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Արտարժույթի փոխարկման հետևանքով առաջացած տարբերությունները ճանաչվել են եկամուտ կամ ծախս համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Առաջացած շահույթը և վնասը ներկայացվում են զուտ հիմունքով՝ համապարփակ ֆինանասական արդյունքների մասին հաշվետվության մեջ «Այլ ֆինանսական հոդվածներ» տողում:

Ստորև ներկայացվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ փոխանակման (փակման) փոխարժեքները.

Արտարժույթ	31.12.2020	31.12.2019
1 ԱՄՆ դոլար	522.59 ՀՀ դրամ	479.7 ՀՀ դրամ

4. Հիմնական միջոցներ

	Համակարգչային և հաշվողական տեխնիկա	Ընդամենը
Սկզբնական արժեք		
Առ 01.01.2020թ.	776	776
Գնում	1,606	1,606
Օտարում	-	-
Առ 31.12. 2020թ.	2,382	2,382
Մաշվածություն		
Առ 01.01.2020թ.	(438)	(438)
Հաշվարկ	(1,210)	(1,210)
Օտարում	-	-
Առ 31.12.2020թ.	(1,648)	(1,648)
Հաշվեկշռային արժեք		
Առ 31.12.2019թ.	338	338
Առ 31.12.2020թ.	734	734

Ֆինանսական տարվա ընթացքում հաշվարկվել է 1,210 հազ. դրամի մաշվածություն, որը ներառվել է իրականացված ծրագրերի գծով ծախսերում:

5. Ոչ նյութական ակտիվներ

	Ծրագրեր	Ընդամենը
Սկզբնական արժեք		
Առ 01.01.2020թ.	80	80
Գնում	731	731
Օտարում	-	-
Առ 31.12. 2020թ.	811	811
Մաշվածություն		
Առ 01.01.2020թ.	(6)	(6)
Հաշվարկ	(70)	(70)
Օտարում	-	-
Առ 31.12.2020թ.	(75)	(75)
Հաշվեկշռային արժեք		
Առ 31.12.2019թ.	74	74
Առ 31.12.2020թ.	736	736

Ֆինանսական տարվա ընթացքում հաշվարկված 70 հազար դրամ ամորտիզացիան ներառվել է իրականացված ծրագրերի գծով ծախսերում:

6. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	31.12.2020	31.12.2019
Դրամական միջոցներ բանկային հաշիվներում ՀՀ դրամով	7,771	1,122
Դրամական միջոցներ բանկային հաշիվներում ԱՄՆ դոլար	9,782	5,084
Դրամական միջոցներ բանկային հաշիվներում ԵՎՐՈ	1,282	4,756
Ընդամենը	18,835	10,962

7. Ստացված շնորհներ

7.1. Ակտիվներին վերաբերող շնորհներ

	2020	2019
Մնացորդը տարեսկզբին	412	-
Ստացված շնորհներ	2,337	856
Եկամուտ ճանաչված շնորհներ	(1,279)	(444)
Մնացորդը տարեվերջին	1,470	412

Ակտիվներին վերաբերող շնորհը եկամուտ է ճանաչվել մաշվող ակտիվի օգտակար ծառայության ընթացքում՝ հաշվարկված մաշվածության ծախսի չափով:

7.2. Եկամուտներին վերաբերող շնորհներ

	2020	2019
Մնացորդը տարեսկզբին	**11,201**	**-**
Ստացված շնորհներ	46,129	31,361
Շնորհի վերադասակարգում	(2,337)	(856)
Եկամուտ ճանաչված շնորհներ	(38,165)	(19,304)
Մնացորդը տարեվերջին	**16,828**	**11,201**

Եկամուտներին վերաբերող շնորհներն իրենցից ներկայացնում են ֆիզիկական և իրավաբանական անձանց Հիմնադրամին կատարված դրամական նվիրատվությունները և նվիրաբերությունները (շնորհները):

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ որպես եկամուտ չճանաչված շնորհներին կից դեռևս չկատարված պայմանները վերաբերում են հետևյալ ծրագրերին.

- «Ռեակտիվիզմ երիտասարդ առաջնորդների ակումբ»
- «Ջայ Ջազաթ» հնդկական ծրագիր
- «Ռեստարտ նախաձեռնության ինստիտուցիոնալ զարգացման ծրագիր»
- «Ուսանողական մարզային քննարկումների ծրագիր»
- «Ուսանողները՝ որպես Հայաստանի ժողովրդավարացման ակտիվ մասնակիցներ»:

Ստորև ներկայացվում են հաշվետու տարում Հիմնադրամի կողմից ստացված դրամական նվիրատվությունները և նվիրաբերությունները (շնորհները) ըստ շնորհատուների.

Նվիրատուներ (շնորհատուներ)	2020	2019
NATIONAL ENDOWMENT FOR DEMOCRACY	11,045	-
PRAGUE CIVIL SOCIETY	16,190	13,706
ԲՀՀՀ	15,979	9,595
ԱՄՆ դեսպանատուն Հայաստանում	1,793	2,733
«Ջայ Ջազաթ» հիմնադրամ	-	4,760
Այլ	1,122	567
Ընդամենը	**46,129**	**31,361**

8. Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր

	31.12.2020	31.12.2019
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	9	67
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին՝ կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով	1,408	-
Ընդամենը	**1,417**	**67**

9. Հարկերի և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ

	31.12.2020	31.12.2019
Եկամտային հարկ	717	672
Սոցիալական վճար	33	22
Դրոշմանիշային վճար	24	20
Ընդամենը	**774**	**714**

10. Եկամուտ ճանաչված շնորհներ

	- 2020 -	- 2019 -
Եկամուտներին վերաբերող շնորհների գծով եկամուտներ	38,165	19,304
Ակտիվներին վերաբերող շնորհների գծով եկամուտներ	1,279	444
Ընդամենը	**39,444**	**19,748**

11. Իրականացված ծրագրերի գծով ծախսեր

	- 2020-	- 2019 -
Աշխատավարձ	23,738	11,103
Վարձակալություն	8,084	2,226
Հյուրանոցի և սննդի ծախսեր	2,366	1,418
Ուսման վարձերի փոխհատուցում	1,657	-
Հիմնական միջոցների մաշվածություն	1,279	444
Տպագրական ծախսեր	1,142	-
Կոմունալ և գրասենյակային ծախսեր	433	362
Տրանսպորտային ծախսեր	92	190
Ճամբարի կազմակերպման ծախսեր	-	2,304
Այլ ծախսեր	1,005	21
Ընդամենը	**39,796**	**18,068**

12. Վարչական ծախսեր

	- 2020-	- 2019 -
Աուդիտորական ծախսեր	360	-
Բանկային ծախսեր	56	108
Այլ	-	60
Ընդամենը	**416**	**168**

13. Կապակցված կողմերի հետ գործարքներ

Հիմնադրամի կապակցված կողմերն են հիմնադրամի հիմնադիրը, հոգաբարձուների խորհրդի անդամները և հիմնական ղեկավար անձնակազմը:

Գործարքներ ղեկավարության հետ

- *Ղեկավարության վարձատրություն*

Հիմնադրամի հիմնական ղեկավար անձնակազմը ստացել է հետևյալ վարձատրությունը.

	2020	2019
Աշխատավարձ՝ հարկերից հետո	3,402	2,674

14. Պայմանական պարտավորություններ

Ֆինանսական երաշխիքներ և ակրեդիտիվներ

Հիմնադրամը 31.12.2020թ. և 31.12.2019թ. դրությամբ ֆինանսական երաշխիքներ և ակրեդիտիվներ չի ունեցել:

Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Հիմնադրամի գույքը ապահովագրված չէ: Այն ապահովագրված չէ գործունեության ընդհատման և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց առաջացած Հիմնադրամի տարածքում տեղի ունեցած պատահարներից կամ նրա գործունեությունից հասցված վնասից: Քանի դեռ Հիմնադրամը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ էական ազդեցություն ունենալ Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Իրավական պարտավորություններ

Հիմնադրամի ղեկավարությունը տեղյակ չէ Հիմնադրամի դեմ հարուցված որևէ փաստացի, անավարտ կամ սպառնացող էական հայցերի մասին:

Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի Հանրապետությունում հարկային համակարգը համեմատաբար նոր է և հատկանշական է հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ: Վերջինս հաճախ հստակ չէ, հակասական է և պահանջում է մեկնաբանություններ: Շատ դեպքերում այս կամ այն հարցում տարբեր հարկային և այլ իրավասու մարմիններ ունեն տարբեր մեկնաբանություններ: Մասնավորապես՝ ՀՀ հարկային օրենսդրությամբ հստակ չէ ստացված պետական շնորհները ավելացված արժեքով հարկվող օբյեկտ դիտելու և ավելացված արժեքի հարկ հաշվարկելու հարցը և կարող է մեկնաբանվել տարբեր կերպ: Հարկային խնդիրներն ուսումնասիրվում են

հարկային մարմինների կողմից, որոնք օրենսդրությամբ լիազորված են հաշվարկել տուգանքներ և տույժեր:

Այս փաստերը Հայաստանի Հանրապետությունում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ Հիմնադրամը չունի լրացուցիչ հարկային պարտավորություններ և պահուստ չի ձևավորել լրացուցիչ հարկային պարտավորությունների գծով:

15. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Հաշվետու ամսաթվից հետո մինչև վավերացման ամսաթիվը ընկած ժամանակահատվածում ճշգրտող դեպքեր կամ էական չճշգրտող դեպքեր տեղի չեն ունեցել:

16. Ֆինանսական հաշվետվությունների հաստատում

Սույն ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են 2021թ հունիսի 2-ին:

Տնօրեն
Յուրի Ավագյան

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 06.08.2021 10:50